Վերջին խօսքերը արտասանեց աբեղան մի առանձին զգացմունքով, որի մէջ նշմարւում էր կարօտեալ սրտի թախիծը: Ես փոխեցիիմ խօսքը.

— Ասացէք, խնդրեմ, հիմա այդ կղզում կա՞ն այնպիսի ճգնաւորներ, որ հրաշքներ գործէին:

— Առաջ եղել են:

— Ինչո՞ւ հիմա չկան:

— Հիմա էլ կան, բայց ցոյց չեն տալիս... Մարդիկ պէտք է առանց հրաշքներ տեսնելու եւս հաւատան, այն ժամանակ միայն նրանց հաւատը կատարեալ կը լինի: — Նա սկսեց երկար խօսել այդ մասին:

Ես համարեա չէի լսում: Իմ ուշադրութիւնը գրաւել էր գեղեցիկ երեկոն: Փոթորկային օրից յետոյ երեկոյեան վերջալոյսը սքանչելի էր: Արեգակի վերջին ճառագայթները, կարծես կատաղի մրրիկից վրէժխնդիր լինելու համար, որ այնօր խանգարեց նրանց տվնջեան խաղաղութիւնը, այժմ լուսաւորել էին ծովակի եզերքը պայծառ, ծիրանեգոյն լուսաւորութեամբ: Ես նայում էի դէպի հեռուն, շատ հեռուն: Ինձ երեւում էին հին Աղիովտի գեղագրական ծովեզերքը: Այդ զարմանալի վայրերը, այդ գեղեցիկ բլուրներն ու հովիտները մի ժամանակ սեփականութիւն էին հայոց Արշակունի արքայազունների: Ժառանգը մնում էր թագաւորի մօտ Այրարատ գաւառում, իսկ մնացեալ արքայազունները ուղարկւում էին այստեղ, որպէսզի գահի վերաբերութեամբ որդիների մէջ հակառակութիւն չծագէր: Այդ բլուրների, այդ մթին ձորերի մէջ, արքայազն երիտասարդները, իրանց որսորդական բարակներով եւ բազէներով, խռովեցնում էին սորամուտ երէցների հանգստութիւնը: Իսկ այժմ նրանց փոխարէն քուրդ բէկզադեն, նիզակը ձեռին, իր վեհապանծ նժոյգի վրայ, հետամուտ էր լինում փախչող եղջերոին... Տեսնում էի Քաջբերունեաց հզօր քաղաքը՝ Արճէշը: Որքա՜ն գեղեցիկ օրեր, որքա՜ն դառն աղէտներ կապուած էին այդ դժբախտ քաղաքի պատմութեան հետ... Պարսիկը, հագարացին, յոյնը դարերի ընթացքում թափեցին նրա վրայ իրանց բարբարոսութիւնը, եւ ինչ էլ որ պակաս էր մնացել, լրացրեց անսիրտ ծովը: Նա ողողեց քաղաքի շրջակայքը, կտրեց նրան ցամաքից եւ, բոլորովին կղզիացնելով, առեց իր ալիքների մէջ: Սարսափած բնակիչները իրանց շքեղ բնակարանների հետ մեծ մասամբ ջրասոյզ եղան... Այժմ արեւի երեկոյեան ճառագայթները լուսաւորում էին նրա միջնաբերդի գագաթը միայն, որը մի սեպաձեւ կղզու նման դուրս էր ցցոել ջրերի մակերեւոյթից: Իսկ ծովը օրէցօր սպառնում էր կլանել Քաջբերունեաց քաղաքի այդ վերջին մնացորդն եւս, եւ բոլորովին անհետացնել նրա տխուր յիշատակը...